□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□□□□
□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□ □□□□□□□□

AM09/ENP-PCA/TP/04

□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□ □□□□□□□□

□□□□□□□□□□□□□□ □ □□□□□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□□□

□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□ □□□□□□□□□

□□□□□ □□□□□□□□ (□□□□□□□□□□ □□□□□□□□)
□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□
□□□□□ □□□□□
□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□
□□□ 3 □□□□□□□□□□□□ □□□□
h□□. +010 524340
ananyan@armstat.am

□□□□□□ □□□□□□□□□□□□□□
□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□
□□□□□ □□□□□
□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□
□□□ 3 □□□□□□□□□□□□ □□□□
h□□. +010 587623
anahit@armstat.am

□□□□ □□□□□□□□
□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□
□□□□□ □□□□□
□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□
□□□ 3 □□□□□□□□□□□□ □□□□
h□□. +010 587623
inga@armstat.am

Բովանդակություն

2. Ամփոփ նկարագիր ---------- էջ 5
3. Ընդհանուր մեկնաբանություններ---------- էջ 5
3. Այցելության նպատակը ----------էջ 5
4. Գործունեության ակնկալվող արդյունքները---------- էջ 6
5. Քննարկված թեմաները---------- էջ 6
6. Արդյունքները ---------- էջ 7
7. Հավելվածներ
Հավելված 1: Տեխնիկական առաջադրանք---------- էջ 8
Հավելված 2: Հանդիպումներ անձանց հետ---------- էջ 10
Հավելված 3: Մինչև հաջորդ գործունեությունը ՀՀ ԱՎԾ –ի կողմից անհրաժեշտ գործողությունների իրականացում---------- էջ 11
Հավելված 4: ՀՀ ԱՎԾ-ի կողմից ՏՀՏ օգտագործման փորձառնական հետազոտություն իրականացնելու նպատակով կատարվելիք գործողությունների ժամանակացույց----------էջ 12
Հավելված 5: ՏՀՏ օգտագործման հետազոտության հարցաթերթի նախագիծ-- էջ 13

1. Հապավումների ցանկ

ՏՀՏ	Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ
ՇԵ	Շահառու երկիր
ԱՊ	Անդամ պետություն
ԱՊՓ	Անդամ պետությունների փորձագետներ
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

2. □□□□□ □□□□□□□□□

Թվինինգ ծրագրի “Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը” պայմանագրի “ Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն” (ՏՀՏ) Բաղադրիչի շրջանակում 2011թ. օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 2 –ը երեք ՇԵ փորձագետ մասնակցել են ք “Դանիայի ՏՀՏ վիճակագրությունը” ուսուցողական այցելությանը:

Մինչ ուսումնական այցելությունը ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից մշակվել էր ՏՀՏ օգտագործման հետազոտության ցուցանիշների և հարցաթերթի ձևաչափի նախագիծը (համաձայն ԵՄ կանոնակարգերի), որն ուղարկվել էր Դանիայի վիճակագրական ծառայություն: Ուսումնական այցելության ընթացքում քննարկվեց կազմակերպությունների կողմից ՏՀՏ օգտագործման հարցաթերթի նախագիծը, սահմանափակ քանակությամբ կազմակերպությունների համար փորձառնական հետազոտության իրականացման համար ընտրանքի կիրառման սկզբունքները և այլ մոթոդաբանական հարցեր:

Ուսուցողական այցելությունը շատ ոգենշնչող էր ՀՀ ԱՎԾ-ի բիզնես վիճակագրության հետագա զարգացումների համար՝ մասնավորապես ՏՀՏ վիճակագրության համար:

3. □□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□□□

Ուսումնական այցելության զեկույցի նախագիծը նախապատրաստվել է Դանիայի վիճակագրական ծառայությունում: ՇԵ փորձագետները շնորհակալություն են հայտնում Դանիայի վիճակագրական ծառայության ներկայացուցիչներին օժանդակության և ցուցաբերած մեթոդաբանական արժեքավոր տեղեկատվության համար, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ աշխատակիցների հանդեպ Դանիայում գտնվելու ժամանակ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի համար:

Ուսումնական այցը նվիրված էր հետևյալ հարցերին.

1. □□□□□□□□□□□□ □□□□□□□□

- ՏՀՏ վիճակագրության ԵՄ կանոնակարգերի ուսումնասիրումը:
- Դանիայի ՏՀՏ վիճակագրության մեթոդաբանության ուսումնասիրումը և դրա կապը ԵՄ կանոնակարգերի հետ:
- ՏՀՏ օգտագործման վերաբերյալ հետազոտության նախագծման, իրականացման պլանի, որակի խնդիրների, մեթոդաբանության առանձնահատկությունների ուսումնասիրումը
- Կազմակերպություններում ՏՀՏ օգտագործման հետազոտության անցկացման հարցաթերթի կառուցվածքի ուսումնասիրումը, հարցաթերթում ընդգրկված ցուցանիշների ընտրանքի սկզբունքների ուսումնասիրումը:
- ՏՀՏ օգտագործման հետազոտության հարցաթերթի լրացման հրահանգի ուսումնասիրումը

- Տվյալների հավաքագրման, սխալների հայտնաբերման և ճշգրտման մեխանիզմների, խմբագրման և մշակման գործիքների, ինչպես նաև աղյուսակների մեջ դրանց ներկայացման մոտեցումների ուսումնասիրումը:
- ՏՀՏ օգտագործման հետազոտության արդյունքների տարածմանը առընչվող հարցերի ուսումնասիրումը:

2. □□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□

- Ուսումնասիրելով Դանիայի վիճակագրական ծառայության ՏՀՏ վիճակագրությունը, մեթոդաբանական առանձնահատկությունները, ՏՀՏ օգտագործման վերաբերյալ հետազոտության իրականացման պլանը և որակի խնդիրները՝ կատարել համապատասխան եզրահանգումներ ՀՀ ԱՎԾ-ի կոմից իրականացվելիք հետազոտության իրականացման համար
- Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետների առաջարկությունները և դիտողությունները հաշվի առնելով կատարելագործել ՀՀ ԱՎԾ-ի կողմից ներկայացված ՏՀՏ օգտագործման հարցաթերթի նախագծում ընդգրկված ցուցանիշները:
- Կազմակերպություններում ՏՀՏ օգտագործման փորձառնական հետազոտության իրականացման նպատակով սահմանափակ կազմակերպությունների համար ընտրանքի մեխանիզմների մեթոդաբանության ուսումնասիրումը:
- Բաղադրիչի մինչև հաջորդ գործունեությունը ընկած ժամանակահատվածում ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացվելիք աշխատանքային պլանի հստակեցումը:
- Հաջորդ գործունեության համար նախընտրելի ժամկետների որոշումը:

3. □□□□□□□□□□ □□□□□□□□□

Ուսուցողական այցելության ժամանակ ուսումնասիրվեց Դանիայի ՏՀՏ վիճակագրության մեթոդաբանությունը, Դանիայի վիճակագրական ծառայությունում ՏՀՏ օգտագործման վերաբերյալ հետազոտության նախագծման, իրականացման պլանի, որակի խնդիրների առանձնահատկությունները: Քննարկվեց ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացված ՏՀՏ օգտագործման նախատեսվող հետազոտության հարցաթերթի նախագիծը, ձևաչափը, հարցաշարում ընդգրկված ցուցանիշները:

Դանիայի փորձագետների կողմից կատարվեցին առաջարկություններ հարցաթերթի նախագծում որոշ ցուցանիշների ընդգրկման վերաբերյալ: Ի լրումն, դանիայի փորձագետները առաջարկեցին նախապատրաստել հարցազրույցի անցկացման համար անհրաժեշտ ուղեցույց (հրահանգներ): Փորձառական հետազոտության ավարտից հետո կարելի է օգտագործել ստացված փորձառությունը հետագա հետազոտությունների համար հրահանգները բարելավելու համար: Քննարկումների արդյունքում նշվեց, որ հետազոտությունը կիրականացվի ներկայացված հարցաթերթով: Այնուամենայնիվ նաև որոշվեց հարցաշարը ներկայացնել “Ձեռնարկությունների Ինկուբատոր” կազմակերպությանը իրենց կարծիքը ստանալու նպատակով: Ընդ որում, կազմակերպությունների ընտրանքի համար հիմքը պետք է հանդիսանա ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի տվյալների բազան:

Իսկ ընտրանքի տեսանկյունից հիմնական շեշտադրումը պետք է դրվի գործունեության ոլորտների և աշխատողների թվաքանակի վրա: Համաձայն ՏՀՏ օգտագործման ուսումնասիրման միջազգային փորձի, այդ թվում Դանիայում կիրառվող մոտեցումների, հետազոտության մեջ նպատակահարմար է ընդգրկել 10 և ավելի աշխատողների թվաքանակ ունեցող կազմակերպությունները, տնտեսական

գործունեության տեսակների Հայաստանի դասակրգչի (ՏԳՏՀԴ խմբ.2) համապատասխան խմբավորումներով (ԵՄ մոդել հարցաշարի մեթոդաբանությանը համահունչ):
Հաշվի առնելով ֆինանսական խնդիրները՝ ծրագրի շարունակականության ապահովման համար, քննարկվեց փորձառական հետազոտությունը իրականացնել փոքր համակցությամբ: Մասնավորապես, որոշվեցփորձառական ընտրանքային հետազոտությունը իրականացնել Երևան քաղաքի համար:
Հիմնականում դանիայի փորձագետների կողմից նշվեց նաև, որ պարտադիր պետք է ապահովվի ընտրանքի ներկայացուցչականությունը, ինչի հետևանքով վիճակագրական արդյունքները վավեր կլինեն Հայաստանի ողջ տարածաշրջանի ընդհանուր ձեռնարկությունների համար: Մասնավորապես, այն դեպքում, եթե փորձառական հետազոտությունը ֆինանսավորման առկայության դեպքում ապագայում վերածվի պատշաճ հետազոտության ընտրանք կատարելու ընթացքում բացի ոլորտից և ձեռնարկության չափսից հաշվի առնել աշխարհագրական դիրքը: Այն դեպքում, եթե փորձառական հետազոտության համար ընտրանքի կատարվի միայն Երևան քաղաքի ձեռնարկությունների համակցությունից, արդյունքները կլինեն վավեր միայն մայրաքաղաքի համար: Քննարկվեցին տվյալների հավաքագրման, սխալների հայտնաբերման և ճշգրտման մեխանիզմների, արդյունքների մշակման և ելքային աղյուսակների ստացման վերաբերյալ տարբեր խնդիրներ:

Քննարկվեցին ՏՀՏ օգտագործման հետազոտության արդյունքների տպագրմանն ու տարածմանն առընչվող մոտեցումները:

Դանիայի վիճակագրության ծառայության կողմից ներկայացվեցին շնորհանդեսները, որոնք ծրագրի մի մասն էին կազմում: Դրանք էին՝ <<Դանիայի ՏՀՏ վիճակագրությունը>>, <<Տվյալների հավաքագրման մեթոդների զարգացումները>>, <<Տեղեկատվության տարածումը Դանիայի վիճակագրությունում>> , <<Բիզնես ռեգիստրի առընչությունը ՏՀՏ վիճակագրությանը և այլ բիզնես վիճակագրությանը>>, <<Կազմակերպություններում հետազոտությունների ընտրանքի մեթոդաբանությունը>>, <<Դանիայի վիճակագրության և վարչական ռեգիստրների, այդ թվում հարկային մարմինների, համագործակցությունը բիզնես ռեգիստրի արդիականացման գործում>>, <<Հարցաշարերի առցանց լրացումը, օգտագործումը և ծանրաբեռնվածության չափումը>> թեմաներով:
Բոլոր շնորհանդեսները շատ ուսանելի էին, ինչպես նաև ՇԵ փորձագետներին տրվեցին դրանց էլեկտրոնային տարբերակները:

3. □□□□□□□□□□□□□

Այցելությունը հնարավորություն ընձեռեց ՇԵ փորձագետներին ծանոթանալ ՏՀՏ վիճակագրության ԵՄ կանոնակարգերին, Դանիայի վիճակագրական ծառայությունում ՏՀՏ օգտագործման հարցաթերթին, ընդգրկված ցուցանիշների կառուցվածքին, որակին առընչվող խնդիրներին և մեթոդաբանության այլ առանձնահատկություններին: Ավելին՝

- Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետների առաջարկությունները և դիտողությունները հաշվի առնելով՝ հնարավորություն ընձեռվեց կատարելագործել ՀՀ ԱՎԾ-ի կողմից ներկայացված ՏՀՏ օգտագործման հարցաթերթի նախագծում ընդգրկված ցուցանիշները (հավելված 5):

- Համաձայնություն ձեռք բերվեց փորձառնական հետազոտությունն անցկացնել կազմակերպությունների փոքր համակցությունով և ընտրանքային հետազոտությունն իրականացնել միայն Երևան քաղաքում:
- Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետների առաջարկությունները, ընտրանքի մեխանիզմների մեթոդաբանության վերաբերյալ, հնարավորություն տվեցին հստակեցնելու ՀՀ ԱՎԾ-ի կողմից նախատեսվող սահմանափակ քանակության կազմակերպությունների կողմից ՏՀՏ օգտագործման հետազոտության ընտրանքի սկզբունքները: Մասնավորապես, հետազոտել 10 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունները տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակրգչի (ՏԳՏՀԴ խմբ.2) հետևյալ խմբավորումներով՝ ներառյալ բաժին C (Մշակող արդյունաբերություն), բաժին D,E (Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում, բաժին F (Շինարարություն), բաժին G (Մեծածախ և մանրածախ առևտուր ավտոմեքենաների և մոտոցիկլետների վերանորոգում), բաժին H (Փոխադրումներ և պահեստային տնտեսություն), բաժին I (Կացության և հանրային սննդի կազմակերպում), բաժին J(Տեղեկատվություն և կապ), բաժին L (Անշարժ գույքի գործունեություն), բաժին M՝ խումբ 69-74 (Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն), բաժին N(Վարչարարական և օժանդակ գործունեություն), բաժին S (միայն խումբ 95.1՝ համակարգիչների և կապի սարքավորանքի նորոգում) :

- Մինչև հարցաթերթի նախագծի դաշտային փորձարկումը որոշվեց այն համաձայնեցնել <<Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ>>-ի հետ:
- Հստակեցվեց բաղադրիչի մինչև հաջորդ գործունեությունը ընկած ժամանակահատվածում ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացվելիք աշխատանքային պլանը:
- Որոշվեց հաջորդ գործունեության համար նախընտրելի ժամկետները:

Աշխատանքային քննարկումները հնարավորություն տվեցին բարձրացնել ՀՀ ԱՎԾ աշխատակիցների մասնագիտական գիտելիքները խնդրո առարկա ոլորտում, ամփոփել կատարված աշխատանքները և հստակեցնել հետագա գործողությունների ժամանակացույցը (հավելված 4):

Հավելվածներ

Հավելված 1

ԵՄ Թվինինգ Ծրագիր

Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը

Թվինինգ Ծրագրի Միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

<u>Նախագիծ</u> Տեխնիկական Առաջադրանք (Զ 5) 2011թ. օգոստոսի 29-ից սեպտեմբերի 2-ը 2011թ

Բաղադրիչ Ա	Որակի Կառավարում
Բաղադրիչ Բ	Բիզնես Ռեգիստր, Կառուցվածքային Բիզնես Հետազոտություն և Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն
Բաղադրիչ Գ	ՀՆԱ –ի Ամբողջականության Բարելավում
Բաղադրիչ Դ	Գյուղատնտեսության Համատարած Հաշվառում
Բաղադրիչ Ե	Հարմոնիզացված Սպառողական Գների Ինդեքս
Բաղադրիչ Զ	**Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն**

Գործունեություն Զ5 Ուսուցողական այցելություն՝ Դանիայի ՏՀՏ վիճակագրության ուսումնասիրությունը

1. Գործունեության նպատակը

Գործունեության նպատակն է Դանիայի ՏՀՏ վիճակագրության ներկայացումը և դրա շուրջ քննարկումների ծավալում: Շեշտը կդրվի Դանիայի համակարգի զարգացման վրա կապված ՀՀ ԱՎԾ-ի ՏՀՏ-ի վիճակագրության հեռանկարների հետ:

2. Ակնկալվող արդյունքը

Գործունեության ակնկալվող արդյունքներն են՝

- Ընկալել Դանիայի ՏՀՏ վիճակագրությունը և դրա կապը ԵՄ կանոնակարգերի հետ

- Ընկալել ՏՀՏ վիճակագրության արտադրանքի տարբեր փուլերը և այլ ստորաբաժանումների ներգրավումը տվյալ աշխատանքների մեջ՝ սկսած ընտրանքից ,տարբեր տվյալների հավաքագրման մեթոդների օգտագործումից, մինչև որակի համակարգեր և տարածման ռազմավարություն
- ՏՀՏ վիճակագրության զարգացման պոտենցիալ սխալ ընկալումը
- Թվինինգ նախագծի շրջանակում ՏՀՏ վիճակագրության բաղադրիչի ժամանակացույցի քննարկում և դրա հնարավոր ճշգրտումները

Ուսուցողական այցելության ընթացքում ստացված տեղեկատվությունը և արդյունքները կներկայացվեն ՇԵ մասնակիցների կողմից նախապատրաստված համատեղ զեկույցի մեջ:

3. Ծրագրի մասնակիցները

Պրն. Գագիկ Անանյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ (ՇԵ բաղադրիչի ղեկավար;)
Տկն. Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճ. բաժնի պետ
Տկն. Ինգա Բարոյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճ. բաժնի գլխավոր մասնագետ

Դիանա Գասոյան, ԹՄԽ օգնական և թարգմանիչ

4. ՇԵ Փորձագետների հանդիպման ծրագիր

Օգոստոսի 29 (երկուշաբթի) – սեպտեմբերի 2 (ուրբաթ)

Ժամը	Միջոցառում	Նպատակ/Միջոցառման մանրամասները
Օգոստոսի 29, 10:00	Ողջույնի խոսքը	Դանիայի վիճակագրության ծառայություն և շաբաթվա աշխատանքային ծրագրի ներկայացում (Լարս Թիգենսեն, Յեսպեր Ելեմոսե)
Օգոստոսի 29, 13:00	Դանիայի ՏՀՏ վիճակագրություն ներկայացում	Դանիայի ՏՀՏ վիճակագրության զարգացումը և ներկայիս կարգավիճակը՝ ներառյալ ԵՄ կանոնակարգերի հետևանքները Հետագա հեռանկարները (Մարտին Լունդո, Ագնես Տասի)
Օգոստոսի 30 9:30	Թվինինգ նախագծի շրջանակում ՏՀՏ բաղադրիչի կարգավիճակը	Առաջընթացի/ մինչ օրս կատարված աշխատանքների ներկայացում (ՇԵ փորձագետներ)
Օգոստոսի 30 13:00	Տվյալների հավաքագրումը և որակի կառավարումը ՏՀՏ վիճակագրության համատեքստում	Հետազոտությունների ընդդեմ վարչական աղբյուրների (ռեգիստր) օգտագործում Հարցաշարերի կառուցվածքը/դիզայնը ներառյալ էլեկտրոնային հաշվետվության միջոցները Սխալների հայտնբերում և ճշգրտման մեխանիզմներ (Մարտին Լունդո, Ագնես Տասի)
Օգոստոսի 31 9:30	Այլ մեթոդաբանական խնդիրներ ՏՀՏ վիճակագրության տարածում	Ընտրանք և կշռում (Մարտին Լունդո, Մեթոդաբանության բաժին) Հրատարակում և Ինտերնետում տեղադրման ռազմավարություն (Ագնես Տասի, Տարածման բաժին)

Օգոստոսի 31 13:00	Թվինինգ նախագծի շրջանակում ՏՀՏ վիճակագրության բաղադրիչի համատեքստում սեմինար	Այլընտրանքային լուծումների քննարկում (ՇԵ փորձագետներ, Մարտին Լունդո, Ագնես Տասի)
Սեպտեմբեր 1 9:30	Դանիայի բիզնես ռեգիստր	Բիզնես ռեգիստրի առնչությունը ՏՀՏ վիճակագրությանը և այլ բիզնես վիճակագրությանը: Դանիայի վիճկագրության և հարկային մարմինների համագործակցությունը բիզնես ռեգիստրի արդիականացման համատեքստում և դրա համապատասխանությունը Հայաստանի համար (Սորեն Անդերսեն, Վիբեկե Սկով Մոլեր)
Սեպտեմբեր 1 13:00	ԿԲՎ առնչվող հարցեր	ԿԲՎ հաշվետվության ձևեր՝ ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափում (Կարստեն Զորնինգ, Աշու Կոնրադ)
Սեպտեմբեր 2 9:30	ՏՀՏ վիճակագրության բաղադրիչի համար հետագա ժամանակացույցի սահմանում	Քննարկումներին համաձայն հնարավոր արդիականացումներ
Սեպտեմբեր 2 13:00	Ամփոփում	Այլ հարցեր և ուսուցողական այցելության գնահատում (Լարս Թիգենսեն, Յեսպեր Ելեմոսե)

Հավելված 2 Հանդիպումներ անձանց հետ

Ուսումնական այցելության ընթացքում ՇԵ ներկայացուցիչները հանդիպել են հետևյալ անձանց հետ

Լարս Թիգենսեն	Դանիայի վիճակագրական ծառայության վաճառքի և մարկետիգի բաժնի տնօրեն
Յեսպեր Ելեմոսե	Դանիայի վիճակագրական ծառայության միջազգային բաժնի գլխավոր խորհրդատու
Մարտին Լունդո	Դանիայի վիճակագրական ծառայության բիզնեսի զարգացման բաժնի գլխավոր խորհրդատու
Սորեն Անդերսեն	Դանիայի վիճակագրական ծառայության վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի պետ
Վիբեկե Սկով Մոլեր	Դանիայի վիճակագրական ծառայության բիզնես ռեգիստրի բաժնի գլխավոր խորհրդատու
Պիտեր Լինդեր	Դանիայի վիճակագրական ծառայության մեթոդաբանության բաժնի պետ
Կարստեն Զորնիգ	Դանիայի վիճակագրական ծառայության

	մեթոդաբանության և տվյալների հավաքագրման բաժնի պետի տեղակալ
Աշու Կոնրադ	Դանիայի վիճակագրական ծառայության մեթոդաբանության և տվյալների հավաքագրման բաժնի գլխավոր խորհրդատու
Կարստեն Զանգենբերգ	Դանիայի վիճակագրական ծառայության հաղորդակցման բաժնի պետ
Յուլիա Ագրեսկովա	Դանիայի վիճակագրական ծառայության հաղորդակցման բաժնի գլխավոր խորհրդատու
Պիա Թոմսեն	Դանիայի վիճակագրական ծառայության աշխատակից

□□□□□□□□ 3

Մինչև հաջորդ գործունեությունը ՀՀ ԱՎԾ-ի կողմից անհրաժեշտ գործողությունների իրականացում

- ՈՒսումնական այցելության ընթացքում ՀՀ ԱՎԾ-ի կողմից ներկայացված հարցաթերթի նախագծի վերաբերյալ աշխատանքային քննարկումների ժամանակ Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետների կողմից կատարված առաջարկությունները հաշվի առնելով իրականացնել հարցաթերթի նախագծի վերջնական տարբերակի մշակում:
- Հարցաթերթի նախագիծը տրամադրել <<Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ>>-ին առաջարկություններ և դիտողություններ ստանալու ակնկալիքով:
- Քննարկել <<Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ>>-ի կողմից ներկայացված փոփոխությունները ՀՀ ԱՎԾ-ի շրջանակում և հնարավորության դեպքում, եթե դրանք չեն հակասում ԵՄ կանոնակարգին, կատարել համապատասխան վերանայումը
- Նշանակել օր հաջոր Զ3 գործունեության շրջանակում սեմինարի անցկացման համար համար, որի ընթացքում շեշտը կդրվի նախագիծ հարցաշարի քննարկմանը և հրավիրել արտաքին շահառուներին

Հավելված 4

ՀՀ ԱՎԾ-ի կողմից ՏՀՏ օգտագործման փորձառնական հետազոտություն իրականացնելու նպատակով կատարվելիք գործողությունների ժամանակացույց

□□□□□□□□	□□□□□□□□□□□□□
2011թ. սեպտեմբերին	Ուսումնական այցելության ընթացքում ՀՀ ԱՎԾ-ի կողմից ներկայացված հարցաթերթի նախագծի վերաբերյալ Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետների կողմից կատարված առաջարկությունները հաշվի առնելով իրականացնել հարցաթերթի նախագծի վերջնական տարբերակի մշակումը
2011թ. սեպտեմբերին	Հարցաթերթի նախագիծի վերջնական տարբերակը տրամադրել <<Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ>>-ին առաջարկություններ և դիտողություններ ստանալու ակնկալիքով
2011թ. հոկտեմբերին	<<Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ>>-ի կողմից ստացված առաջարկությունները և դիտողությունները ամփոփել և կատարել համապատասխան փոփոխություններ հարցաթերթի նախագծում, եթե վերջիններս չեն հակասի ոլորտը բնութագրող ԵՄ մեթոդաբանությանը
2011թ. հոկտեմբերին	Կազմել հարցաթերթի նախագծի վերջնական ձևաչափը, ցուցանիշները, մեթոդաբանությունը
2011թ. նոյեմբեր ամիս	Կազմակերպել սեմինար ԱՊ երկրների փորձագետների և արտաքին շահառուների մասնակցությամբ
մինչև 2011թ. դեկտեմբերի վերջը	Փորձառնական հետազոտություն իրականացնելու նպատակով տնտեսական գործունեության ոլորտների ընտրում և այդ ոլորտներից համապատասխան ընտրանքի կազմակերպում
2012թ. փետրվար-մարտ ամիսներ	Հարցաթերթերի բաժանման և լրացված հարցաթերթերի հավաքագրման աշխատանքների կազմակերպում հարցազրուցավարների միջոցով
մինչև 2012թ. հունիս ամիսը	Մուտքագրման աշխատանքների իրականացում, ելքային աղյուսակների ստացում կազմում, ծրագրային աշխատանքների իրականացում
Նախքան 2012 դեկտեմբեր	Հետազոտության արդյունքների տեղադրում ՀՀ ԱՎԾ-ի կայքում

Հավելված 5 ՏՀՏ օգտագործման հետազոտության հարցաթերթի նախագիծ

□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□

□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□

□□□□□□□□□□□□□ □ □□□□□□□□□`<<□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□ □□□□□□>> □□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□ 2000□. □□□□□□ 4-□ □□-48 □□□□□□□, □□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□ 2003□. □□□□□□□□□□□ 3-□ <<□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□ □□□□□□ □□□□□□□□□□□□ □□□□□□>> □□□ 11-□ □□□□□□□□□ □□□□□□□□□□ □□□□□□ □ □□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□ □□□□□□□□□ □□□□□□□
□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□ □ □□□□□□□□

□□□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□□_____ (□□□□□□□□□□) □□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□ □□□□□□□□□ □□□□□□□ _____ _____ I I I I I I □□□□□□□□□ □□□□□□ _____ I I I □□□□□□□□□□ _____ I I I I I □□□□□□□□□□□□□□ □□□□□□□□ _____ □□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□□ □□□□□□□ I I I I I I I I I I □□□□□□□□□□□□□□□□ (□□□□□□□□□□□□□□□□□) □□□□□□□□□□□ I I I I I I I I I I □□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□ I I I I I I I I I □□□□□□□□ □□□□□□□□□□□ □□□□□□□□□ □□□□□□□ □ □□□□□□□□□□□□□□□□□ *(□□□□□□□□□□□□□□□□□)* □□□□□□□□□□ □□□□□□□□□ □□ □□□□□□□□□□□ □□□□□□□□□□□□□□□□□□□

	թվային օժանդակիչ (PDA) կամ սմարթֆոններ		դարձեք Է1
Ա2.	**Համակարգիչ օգտագործող աշխատողների թվաքանակը (անհատական, դյուրակիր (**օրինակ՝ լափթոփ, նոթբուք, նետբուք**), անհատական թվային օժանդակիչ (PDA) կամ սմարթֆոններ**	_____ *մարդ* կամ _____ %	

Ա3.	**Ձեր կազմակերպությունում արդյոք օգտագործել են ներքին համակարգչային ցանց** (օրինակ՝ տեղական ցանց LAN)	☐	☐
Ա4.	**Ձեր կազմակերպությունն ունի ներքին գլխավոր էջ** (Ինտրանետ)	☐	☐
Ա5.	**Արդյոք աշխատակիցներն ունեցել են մատչելիություն էլեկտրոնային եղանակով անհատական մարդկային ռեսուրսների ծառայություններին (**օրինակ՝ աշխատա-ժամերի գրանցման համակարգ, արձակուրդի դիմում, վճարման թերթիկների դիտման կամ բեռնավորման հնարավորություն կամ այլ ծառայություններ**)**	☐	☐

	Մոդուլ Բ **Ինտերնետի օգտագործումը և հասանելիությունը** **2011 թ. հունվարին**		
	Բաժին 1. Ինտերնետի հասանելիությունը 2011 թ. հունվարին		
		Այո	**Ոչ**
Բ1.	**Ձեր կազմակերպությունն ունեցել է Ինտերնետ հասանելիություն**	☐	☐ → անդրադարձեք Գ1
Բ2.	**Ինտերնետ հասանելիություն ունեցող աշխատողների թվաքանակը**	_____ *մարդ* կամ _____ %	
Բ3.	**Ձեր կազմակերպությունն ունեցել է Ինտերնետին արտաքին միացման հետևյալ տեսակները**		
	1) Ավանդական մոդեմով (dial-up մատչելիություն նորմալ հեռախոսագծի միջոցով) կամ ISDN կապ	☐	☐
	2) DSL (xDSL, ADSL, SDSL և այլն) կապ	☐	☐
	3) Այլ ֆիքսված Ինտերնետ կապ Օրինակ, մալուխ , վարձակալված գիծ (օրինակ, E1 կամ E3 1 մակարդակի և ATM 2 մակարդակի), Frame Relay, Metro-Ethernet, PLC - Powerline հաղորդակցում և այլն, ֆիքսված անլար կապ	☐	☐
	4) Շարժական լայնաշերտ կապ (նվազագույնը 3G մոդեմով կամ հեռախոսով) օգտագործելով, օրինակ, UMTS, CDMA2000 1xEVDO, HSDPA	☐	☐
	5) Այլ շարժական կապ օգտագործելով, օրինակ, անալոգային շարժական հեռախոս, GSM, GPRS, EDGE	☐	☐
Բ4.	**Որն էր ձեր ձեռնարկության կողմից օգտագործված Ինտերնետի ամենաարագ ներբեռնման արագությունը** (նշել միայն մեկ տարբերակ)		
	1) մինչև 2.0 Մբ/վ	☐	
	2) 2.1 Մբ/վ - 10.0 Մբ/վ	☐	
	3) 10.1 Մբ/վ – 30.0 Մբ/վ	☐	
	4) 30.1 Մբ/վ-100.0 Մբ/վ	☐	
	5) 100.1 Մբ/վ և ավել	☐	
Բ5.	**Որքան աշխատակից է ապահովվել դյուրակիր սարքավորմամբ նվազագույնը 3G տեխնոլոգիայով Ինտերնետ մուտք գործելու համար** (օրինակ՝ դյուրակիր համակարգչով, մոդեմով, կամ հեռախոսի միջոցով UMTS, CDMA2000 1xEVDO, HSDPA, մինչդեռ բացառելով GPRS)	_____ *մարդ* _____ %	

		Այո	Ոչ
		Այո	Ոչ
Բ6.	**Ձեր կազմակերպությունն ունեցել է կայք կամ գլխավոր էջ**	☐	☐ → անդրադարձեք Բ8
Բ7.	**Կայքը կամ գլխավոր էջը ունեցել են արդյոք հետևյալ միջոցներից որևէ մեկը 2011 թ. հունվարին**		
	1) առցանց պատվերների ներկայացում կամ ամրագրում օրինակ՝ գնումների արկղ	☐	☐
	2) գաղտնիության քաղաքականության փաստաթուղթ,գաղտնիության կնիք կամ հավաստագրում կայքի պաշտպանության համար	☐	☐
	3) ապրանքների կատալոգ կամ գնացուցակ	☐	☐
	4) այցելուների համար ապրանքների փոփոխման կամ նախագծման հնարավորություն	☐	☐
	5) թափուր աշխատատեղերի հայտարարություններ կամ առցանց աշխատանքի դիմելու հնարավորություն	☐	☐
	6) այլ առցանց հասանելի դիտարկում ----------	☐	☐

Բաժին 2. Ինտերնետի օգտագործումը հանրային մարմինների հետ շփման նպատակով 2010 թ.

		Այո	Ոչ
Բ8.	**Կազմակերպությունն օգտագործել է ինտերնետը հետևյալ նպատակներով՝**	☐	☐ → անդրադարձեք Բ8
	1) հանրային մարմինների վեբ կայքից կամ գլխավոր էջից տեղեկատվություն ստանալու նպատակով	☐	☐
	2) հանրային մարմինների վեբ կայքից կամ գլխավոր էջից հաշվետվական ձևերը ստանալու նպատակով օրինակ, հարկային, վիճակագրական հաշվետվական ձևեր և այլն	☐	☐
	3) էլեկտրոնային եղանակով լրացված հաշվետվության ձևերը ներկայացնելու նպատակով	☐	☐
	4) այլ նպատակով (նշել) ----------	☐	☐
Բ9.	**Ձեր կարծիքով որ պատճառները կարող են սահմանափակել հանրային մարմինների հետ շփումը**		
	1) տվյալների գաղտնիությանն ու անվտանգությանն առնչվող հարցեր	☐	☐
	2) Էլեկտրոնային ընթացակարգերը չափազանց բարդ են/կամ չափազանց ժամանակատար	☐	☐
	3) էլեկտրոնային ընթացակարգերի առկայության մասին տեղյակ չլինելը	☐	☐
	4) այլ պատճառով (նշել) ----------	☐	☐

Բաժին 3. Ինտերնետի օգտագործումը հանրային մարմինների հետ էլ-գնումների նպատակով 2010 թ.

Հանրային էլեկտրոնային գնումը վերաբերում է կազմակերպության կողմից ինտերնետի օգտագործմանն ապրանքներ կամ ծառայություններ առաջարկելու համար ազգային մակարդակում կամ այլ երկրներին: Էլ-գնումների գործընթացը հիմնված է մի շարք փուլերի վրա սկսած ծանուցման պահից (գնումների ծանուցումների և տենդերի մասնագրերի առկայության առցանց հնարավորություն) **մինչև տենդերի շնորհում և վճարում:**
Էլ-տենդերն էլ-գնումների գործընթաց է, որն առընչվում է տենդերների կամ առաջարկների առցանց ներկայացման հետ, ներառում է գնառաջարկների ներկայացումը բաց, փակ կամ բանակցությունների գործընթացները, ինչպես նաև շրջանակային պայմանագրերը և Դինամիկ Գնումների համակարգերը (DPS).
Էլ փոստով գնառաջարկների ներկայացումը բացառվում է:

		Այո	Ոչ
Բ10.	**Ձեր կազմակերպությունն օգտագործել է արդյոք ինտերնետը հանրային մարմինների էլեկտրոնային գնումների համակարգերից տենդերի փաստաթղթերին կամ մասնագրերին հասանելիության համար**	☐	☐

Բ11.	**Ձեր կազմակերպությունն օգտագործել է արդյոք Ինտերնետը հանրային մարմինների էլեկտրոնային գնումների համակարգերում (Էլ-Տենդեր) ապրանքներ կամ ծառայություններ առաջարկելու համար**	☐	☐
	1) ՀՀ-ում	☐	☐
	2) այլ երկրներին	☐	☐
Բ12.	**Ձեր կազմակերպությունը օգտագործել է արդյոք ցանկացած հաղորդագրության մեջ էլեկտրոնային ստորագրություն** (օրինակ՝ օգտագործելով գաղտնի կոդերի մեթոդները, որոնք հավաստիացնում են հաղորդագրության իսկությունը և ամբողջականությունը՝ եզակիորեն փոխկապակցված և ստորագրողին նույնականացնելու հնարավորությամբ, ինչպես նաև հաղորդագրության մեջ հետագա փոփոխության բացահայտման հնարավորությամբ	☐	☐

Մոդուլ Գ
Ավտոմատ մշակման համար հարմար հաղորդագրությունների ուղարկումը և/կամ ստացումը կազմակերպությունից դուրս 2011թ. հունվարին

Ավտոմատ մշակման համար հարմար տվյալների էլեկտրոնային փոխանցում նշանակում է՝
- հաղորդագրությունների ստացում/ուղարկում
  (օրինակ՝ պատվերներ, հաշիվներ, վճարման գործարքներ, արտադրանքի նկարագիր, տրանսպորտային փաստաթղթեր, հարկային հայտարարագրեր, վիճակագրական փաստաթղթեր և այլն)
- համաձայնեցված կամ ստանդարտ ձևաչափ, որը թույլ է տալիս ավտոմատ մշակում
  օրինակ՝ EDI, EDIFACT, ODETTE, TRADACOMS, XML, xCBL, cXML, ebXML
- ցանկացած համակարգչային ցանցի միջոցով և այլն

		Այո	Ոչ
Գ1.	**Ձեր կազմակերպությունը ստացել կամ ուղարկել է արդյոք տեղեկատվություն էլեկտրոնային եղանակով այն ֆորմատով, որի համար թույլարելի է ավտոմատ մշակումը**	☐	☐ → անդրադարձեք Դ1
Գ2.	**Ձեր կազմակերպությունը ստացել և/ կամ ուղարկել է տեղեկատվություն էլեկտրոնային եղանակով հետևյալ նպատակների համար**		
	1) Ֆինանսական հաստատություններին վճարման հանձնարարականների ուղարկում	☐	☐
	2) Արտադրանքի մասին տեղեկատվության (օրինակ՝ կատալոգներ, գնացուցակներ) ստացում/ուղարկում	☐	☐
	3) Տրանսպորտային փաստաթղթերի (օրինակ՝ տրանսպորտային բեռնագիր) ստացում/ուղարկում	☐	☐
	4) Հանրային մարմիններից տեղեկատվության ստացում/ուղարկում (օրինակ՝ հարկային, վիճակագրական տեղեկատվություն, ներմուծման կամ արտահանման հայտարարագրեր	☐	☐
	5) այլ նպատակների համար (նշել) ----------	☐	☐

Մոդուլ Դ
Փաստաթղթերի (հաշիվների) ներկայացումը էլեկտրոնային եղանակով 2011թ. հունվարին

		Այո	Ոչ
Դ1.	**Ձեր կազմակերպությունը ուղարկել է էլեկտրոնային փաստաթղթեր (հաշիվներ)**	☐	☐ → անդրադարձեք Դ2

	1) ստանդարտ կառուցվածքով փաստաթղթեր (հաշիվներ) հարմար ավտոմատ մշակման համար օրինակ՝ EDI, UBL, XML և այլն	☐	☐
	2) Էլեկտրոնային փաստաթղթեր (հաշիվներ), որոնք հարմար չեն ավտոմատ մշակման համար օրինակ՝ էլ-նամակներ, էլ-նամակներին կից ներկայացվող PDF ֆորմատով փաստաթղթեր	☐	☐
Դ2.	**Ձեր կազմակերպությունը ստացել է արդյոք էլեկտրոնային փաստաթղթեր (հաշիվներ) ստանդարտ կառուցվածքով՝ հարմար ավտոմատ մշակման համար** օրինակ՝ EDI, UBL, XML	☐	☐

Մոդուլ Ե
Կազմակերպության ներսում տեղեկատվության էլեկտրոնային և առցանց եղանակով տրամադրումը 2011թ. հունվարին

		Այո	Ոչ
Ե1.	**Ձեր կազմակերպության ներսում էլեկտրոնային կամ առցանց եղանակով իրականացվել է արդյոք վաճառքի, գնման հայտերի կամ այլ բնույթի տեղեկատվության փոխանակում (ստացում կամ տրամադրում) կազմակերպության կառավարման ապարատի և/կամ նրա ստորաբաժանումների միջև** (օրինակ՝ հաշվապահություն և այլն)	☐	☐

Մոդուլ Զ
Էլեկտրոնային կոմերցիայի գործարքներ (էլեկտրոնային եղանակով վաճառք և գնում) 2010թ.

Էլ կոմերցիայի գործարք է համարվում ապրանքների կամ ծառայությունների վաճառքը, որն իրականացվել է համակարգչային ցանցերի միջոցով հատուկ նախագծված մեթոդների օգտագործմամբ՝ հայտեր տալու և ստանալու համար: Ապրանքները և ծառայությունները պատվիրվում են այդ մեթոդներով, սակայն վճարումը և ապրանքների և ծառայությունների վերջնական առաքումը չպետք է իրականացվի առցանց: Էլ կոմերցիայի գործարքները բացառում են ձեռքով տպված էլ փոստի հաղորդագրություններով ներկայացված հայտերը:

Բաժին 1. Վեբ վաճառք

		Այո	Ոչ
Զ1.	**Ձեր կազմակերպությունը ստացել է ապրանքների կամ ծառայությունների պատվերներ վեբ կայքի միջոցով**	☐	☐ → անդրա-դարձեք Զ4
Զ2.	**Ձեր կազմակերպությունը ստացել է պատվերներ կայքի միջոցով հետևյալ երկրների հաճախորդներից**		
	1) ՀՀ	☐	☐
	2) ԱՊՀ երկրներ	☐	☐
	3) այլ երկրներ	☐	☐
Զ3.	**Խնդրում ենք նշել ձեր կազմակերպության հասույթը կայքի միջոցով ստացված պատվերների արդյունքում (առանց ԱԱՀ)**	_____ *հազ. դրամ* կամ _____ *%*	

Բաժին 2. EDI տեսակի հաղորդագրություններով վաճառք

EDI տեսակի հաղորդագրություններն (էլեկտրոնային տվյալների փոխանակում) այստեղ օգտագործվում են որպես ընդհանուր տերմին բիզնես տեղեկատվության ստացման կամ ուղարկման համար, որը թույլ է տալիս դրա ավտոմատ մշակումը (օրինակ՝ EDIFACT, UBL, XML).

		Այո	Ոչ
Զ4.	**Ձեր կազմակերպությունը ստացել է ապրանքների կամ ծառայությունների պատվերներ EDI տեսակի հաղորդագրությունների միջոցով**	☐	☐ → անդրա-դարձեք Զ7
Զ5.	**Ձեր կազմակերպությունը ստացել է պատվերներ EDI տեսակի հաղորդագրությունների միջոցով հետևյալ երկրների հաճախորդներից**		
	1) ՀՀ	☐	☐
	2) ԱՊՀ երկրներ	☐	☐
	3) այլ երկրներ	☐	☐
Զ6.	**Խնդրում ենք նշել EDI տեսակի հաղորդագրության միջոցով ստացված պատվերների արդյունքում հասույթը (առանց ԱԱՀ)**	_____ *հազ. դրամ* կամ _____ *%*	

Բաժին 3. Էլ կոմերցիայի գնումներ

		Այո	Ոչ
Զ7.	**Ձեր կազմակերպությունը տվել է ապրանքների կամ ծառայությունների պատվերներ՝ օգտագործելով համակարգչային ցանցերը** (վեբ կայքի միջոցով կամ EDI տեսակի հաղորդագրություններ՝ բացառելով ձեռքով տպված էլ նամակները)	☐	☐ → անդրա-դարձեք Է1
Զ8.	**Ձեր կազմակերպությունը տեղադրել է արդյոք պատվերներ վեբ կայքի միջոցով կամ EDI տեսակի հաղորդագրությունների միջոցով հետևյալ երկրներում գտնվող մատակարարներից**		
	1) ՀՀ	☐	☐
	2) ԱՊՀ երկրներ	☐	☐
	3) այլ երկրներ	☐	☐
Զ9.	**Խնդրում ենք նշել էլեկտրոնային եղանակով գնումների պատվերների արժեքը (առանց ԱԱՀ)**	_____ *հազ. դրամ* կամ _____ *%*	

Մոդուլ Է
Կազմակերպության գործունեության հիմնական ցուցանիշները 2010թ.

Է1.	**Աշխատավարձի հաշվարկման համար կիրառվող աշխատողների միջին ամսական թվաքանակը**	_____ *մարդ*
Է2.	**Հասույթը (առանց ԱԱՀ)**	_____ *հազ. դրամ*

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հարցազրուցավար _____ _____